

ՀԱՍՏԷ
M. ARCHAM
Poste Restante
ATHÈNES (Grèce)

Խմբագրութեան ուղղութեամբ նամակ կամ
այլ գրութիւնք ետ չեն զրկուիր: Յօդ-
ուածներու պատշաճ դատուածները միայն
կը հրատարակուին:
Բաժնեգնի կամ ծանուցման փոխարէն ա-
մէն երկրի նամակագրօջման (փուլ) կ'ըն-
դունուին հարիւրին 20 պակաս հաշուելով:
Ծանուցումներ կ'ընդունուին չիւրա-
մատչելի գիններով:

ΕΦΗΜΕΡΙΣ Η ΕΝΩΣΙΣ

ՄԻՈՒԹԻՒՆ

(ՕՌԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԳԱՂԱՓԱՐԻ)

ԲԱԾՆԵԳԻՆ

Տարեկան արծաթ ֆրանք 4
Վեցամսեան 2
Հայալատ քաղաքներու մէջ ձեռքէ կը
ծախուի հատը 10 սանթիմ:
Փոսթի ծախքը խմբագրութեան կը
պատկանի:
Բաժնեգիրները կանխիկ վճարելի են:
Թերթ ուղղութեամբ բաժնեգիրը չը
պարունակող նամակները նկատի չեն
առնուիր:
«Միութիւն»ը և ոչ մի տեղ չի
զրկուիր:

Գին 10 ՍԱՆԹԻՄ

Կ Ի Ս Ա Մ Ս Ա Թ Ե Ր Թ Ա Զ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

Գին 10 ՍԱՆԹԻՄ

Գ. ՏԱՐԻ

ԱԹԵՆՔ

113

ՍԱՐՏ

1899

Թիի 27

Ո՛վ ՈՐ ԱԿԱՆՋ ՈՒՆԻ ԼՍԵՂՈՒ,
ԹՈՂ ԼՍԷ ՈՒՇԱԿՐՈՒԹԵԱՄՈ՛՛՛ ԻՐ ԵՂ-
ԲԱՅՐՆԵՐՈՒ ԱՂԵԿՏՈՒՐ ՎԻՃԱԿԸ, ԵԻ
ԸՍՏ ԱՅՆՄ ՎԵՐԱԲԵՐՈՒԻ ԴՊԻ ԱԶ-
ԳԱՅԻՆ ԳՈՐԾԵՐԸ:

Փետ. 18 Թուականով Վիեննայէն
կը հեռագրեն հետեւեալ սրտածմիկ
բօթը:

Սարսափելի և անկարողելի
քաղցութիւն մ'է, որ կը տիրէ Հա-
յաստանի մէջ: Վանի նահանգէն ըս-
կըսեալ Տիգրիս գետի երկու եզերքը
գտնուող բոլոր երկիրները և չըն-
կայ գիւղերը նոյն իսկ մինչև Պաղ-
տատ, Հայ բնակիչները անհաւատալի
խեղճութեան մէջ կը գտնուին, հա-
րիւրաւոր Հայեր ցրտի սաստկութենէն
և անօթութենէն կը մեռնին:

Թուրք կառավարութիւնը՝ այս
թշուառ արարածներու կեանքը փըր-
կելու համար ո՛չ միայն մարդասիրա-
կան միջոցներ ձեռք առնել չուզեր,
այլ նոյն իսկ Կ. Պօլսոյ Հայերու Ի
նպաստ իրենց քաղցած եղբայրներու
բացած հանգանակութեան ալ ար-
գելք կը դառնայ և չթողուր որ փոք-
րիկ օգնութիւն մը ընեն:

Մարդասիրական ընկերութեանց
կողմէ զրկուած նպաստները կը բաշ-
խուին միայն անոնց, որ Պապական-
ութիւնը ընդունած են կամ կըն-
դունին:

Անօթութիւնը երթալով կը տա-
րածուի Հայաստանի բոլոր քաղաքնե-
րու և գիւղերու մէջ, բաց ի Մու-
սուլի գաւառէն, որուն բնակիչները
թուրք ըլլալուն համար Կայսերա-
կան Կառավարութեան կողմէ կը
խնամուին:

Իրաց այս կացութիւնը եթէ տա-
կաւին ժամանակ մ'ալ չարունակուի,
Հայաստանի մէջ Հայու անուն չպիտի
լսուի:

Լսեցէ՛ք ո՛վ պ. պահպանողական-
նե՛ր, Հայրենիքնիդ ահա՛ կը կորսուի:
Ղուք շարունակեցէ՛ք արտասահմանի
մէջ ազատ համարձակ գիրար գրել:
Վայ, հազար վայ այն ազգին՝
որ ձեզի պէս քարոզիչներ ունենալու
գոթաղղութիւնը ունեցեր է:

ՀԱՅԻ ԿԻՐԻԻ

1895-96 Թուականին՝ Բիւզան-
դիոնի բարձանց վրայ սլացող աղմը-
կայոյ՞ մըրիկը՝ այն ահարկու փոթո-
րիկը՝ հազարաւոր անմեղ Հայերու և
ո՛չ-նուազ իսկական անկեղծ յեղա-
փոխականներու թանկագին կեանքը
անհետացուց. իսկ անդին իրենց ըս-
տուերէն սարսափահար եղող մկանց
պէս՝ ծակերը մտնող, մ ու հ ա լ Լ է-
պիի անունով ապրած փափուկ մեծ-

ցած՝ յեղափոխութեան թափփու-
ներն ալ քշեց, բերաւ նետեց արտա-
հասման զանազան անկիւնները: Ա-
սոնց ազգային կեանքի մէջ ունեցած
անցեալը, յեղափոխութեան դիմակի
տակ խաղացած անուր դերերը, գոր-
ծած զեղծումներն, եթէ հարկ լինի
մանրամասնօրէն հրապարակել, ամ-
բողջ Հատորներ կը կազմեն. հետե-
ւապէս ոչ ոք կը համարձակի տպա-
գրութեան ահագին ծախքերը ըս-
տանձնել այդպիսի գործ մը հրատա-
րակութեան տալու համար:

Ո՛վ կարող է ուրանալ սա՛ իրո-
ղութիւնը որ այդ մեծապատիւ բաղ-
դարնորները ի սկզբանէ ցայս վայր
Հայի յեղափոխականներ եղած են, ու
լոկ հացի կուլ մը մղելով յեղափո-
խութեան վարկը ստորնացուցած և
մեր թշնամոյն յայտնի գործակիցներ
դարձած են: Ո՛ր խղճամիտ Հայը
ձեռքը սրտին դնելով չպիտի խոստո-
վանի թէ՛ ասոնք Հայութեան համար
պատուհաս մ'էին որ Հայ ժողովրդի
միամտութիւնն իրենց դրամագլուխ
ունենալով՝ մերթ կեղծ կնիք չինել
տալով մերթ կարմիր դանաթով գըր-
ուած սուտ ու փուտ պաշտօնական
թղթեր ներկայացնելով և մերթ լեռ-
նային աւազակներու պէս սպառնա-
լիքով կը կողոպտէին Հայ վաճառա-
կանները, կը կորզէին չափաւոր
խեղճ գաւառացի խառնափոխերու
(իրենց բաւերով կը խօսին)՝ ճակտի
արիւնոտ քրտանց արդիւնքը: Կը
զարմանաք թէ մենք ռամիկներս
այսքան ապուշներ ենք եղեր, որ
մեր մէջ ցարդ չգտնուեցան այնպիսի
յանդուգն մարդեր, որոնք գէն ի ձե-
ռին երթալին ասոնց օձիքէն բռնելով
հաչել պահանջէին թէ՛ այն հազա-
րաւոր ոսկիները, զորս ապօրինի մի-
ջոցներով յեղափոխութեան անուան
տակ կորցած էին, քանի՞ սանթիմ
նպատակին գործածեցին, կամ որո՞ւ
յանձնեցին, քանի՞ գէնք զրկած են
երկրին մէջ, թէ՛ իրենց թանկագին
կեանքը փրկելու համար կաշառք
տոսած են թուրքին: Հապա ի՞նչպէս
և ի՞նչ իրաւունքով յեղափոխականի
դիմակը կրած՝ այս օրերս գաւառավալի
մաս կ'արան երու պէս ազգային
հրապարակը ինկած ազգասիրութիւն
կը քարոզեն, այն ալ յեղափոխական
ոգին Հայ սրտերու մէջ խեղդամահ
ընելու պայմանաւ: Ահա՛ այս է այդ
անամօթ լիբերալ ուխտած ազգա-
սիրութիւնն ու կատարելիք պարտա-
կանութիւնը:

Գիտէ՛ք որու կը նմանին պղտոր
ջրին մէջ ձուկ. որսացող այս հրէշ-
ները. — բոլոր թրքահայերուս ծա-
նօթ է Կ. Պօլսոյ էթ-Մէյտանի հրա-
պարակը, ուր կը տեսնէք Հայրենի-
քէն նոր եկած միամիտ ալպանացի

Հացավաճառ մը, որ եռոտանի վրայ
գետեղած թապալ մը հաց, կը ըս-
պառէ խեղճ օրապահիկը ճարել. —
Մինչդեռ անդին Պօլսոյ փողոցային
հանրածանօթ գունաւոր և անգոյն
խորամանկ շները աղմկալից սուտ
կուլ մ'է որ կը հանեն, ապուշ հա-
ցավաճառը իրենցմով զբաղեցնելու
ու անոր հացերը յափշտակելու հա-
մար: Հացավաճառը՝ իւր հացերը թո-
ղած կերթայ քիչ մը հեռու շներու
կուլին մօտ հանդիսատես կը լինի և
ահա շները իրար գզելով հրելով հըր-
մըշտկելով յանկարծ կը բաղխեն ե-
ռատոնի փայտին և կը չընեն թապ-
լան. հացերուն վար թափիլը և իւ-
րաբանչիւր շուռի մէկ մէկ հաց յա-
փշտակել ու անհետանալը վայրկե-
նական կը լինի: Եթէ մար Հացավաճառը
մինչև որ թապալին քով կը հասնի
ՀԱՅԻ ԿԻՐԻՒՆ ալ արդէն վերջացած
կը լինի:

Այն որ Հայ է, Թող գիտնայ թէ՛
իւր վրայ նուիրական պարտականու-
թիւն մը կը ծանրանայ: Թէ ի՞նչ: Ա-
ռանց կողմնակալութեան, առանց
կուսակցամոլութեան լրջօրէն քննէ
այդ պարոններու գործունէութիւնն
ու հրատարակութիւնները, ատոնց
իւրաբանչիւր աղուէսական քայլերուն
հետեւի, մինչև որ տեսնէ ու հաւա-
տայ—Թովմաս առաքեալին պէս—թէ՛
մեր գծած տողերն արդէն օք արդա-
րացի, թէ անձնական կրիք արդիւնք
են: Եթէ համամիտ լինի մեզ, թող ա-
մեն անկիւնէ ձայն բարձրացնէ հրա-
ւիրէ Հայ հասարակութեան այն մա-
սը, որ ցարդ այդ տղուկներու խա-
բէութեան զոհ գացած է բարեմտու-
թեամբ, թող յանձնարարէ անոնց
որ զգուշանան ատոնց սաղանայակա-
ն ծուղակէն, իսպառ դադրեցնելով ի-
րենց նիւթական ու բարոյական օ-
ժանդակութիւնը:

Յայտնի երողութիւն մ'է որ մեր
այս յախուռն քննադատութեամբ 3-4
մարդուկներէ բաղկացեալ խմբակի մը
արբանեակներու արհամարհելի պիտի
դառնանք. բայց որո՞ւ փոյթ. բաւա-
կան է որ զրպարտիչներ չլինինք, և
մեր գրածները ճամբատութենէ զուրկ
չլինին:

«Միութիւն»ը՝ իւր ուղղութեան
համաձայն միշտ պիտի պահէ իւր
անկողնակալութիւնը, ճշմարտախո-
սութիւնն ու ազատաստութիւնն, և
անվատ յառաջ պիտի տանի իւր
ստանձնած մեծ գործը, առանց և ո՛չ
մի կուսակցութենէ վախճալու:

Մենք իբր ռամիկ դասակարգի
պատկանող Հայեր՝ ո՛չ գրական
ասպարիզին մէջ մրցելու ելած ենք
և ո՛չ ալ թերթի հասոյթէն ապ-
րի կերակներ. այլ լոկ ազգային

կենսական շահերը պաշտպանելու
համար հիմնած ենք սոյն ժողովրդա-
կան թերթը:

Ուրեմն կը կրկնեմք. քանի որ
մենք մեզի համար ունինք անձնական
գործ մը, ո՛չ Մարտականներէն. ո՛չ
Դաշնակցութենէն և ո՛չ ալ մեր թեր-
թէն նիւթական ո՛ւ և է օգուտ մը
չենք սպասեր, աղաւտ համարձակ պի-
տի գրենք որ կուսակցութեան մասին
ալ որ լինի: Ուզողը կը կարողայ մեր
թերթը, չուզողը երեք անգամ իւր
շուրջը կը դառնայ, և այդ կերպով
իւր բարկութիւնը կը մեղմացնէ:
Բայց լաւ է որ մեր թապալին քովէն
չի հեռանաք, մեր հացերուն տէր
ըլլանք որ շներուն յափշտակել տալով
անօթի չի մնաք. այն ատեն մի ան-
գամ ընդ միշտ վերջ տուած կը լի-
նինք այս ՀԱՅԻ ԿԻՐԻՒՆ:

ՓՈՐՁՈՒԱՄՆԵՐԸ ԵՐԿՐՈՐԴ ԱՆԴԱՄ
ՓՈՐՁԵԼԸ ԱՊՈԻՇՈՒԹԻՒՆ Է

Ազգի մը յեղաշրջման և յառաաջ-
դիմութեան էական պայմանն է հիմ-
նական դատարարակութիւնը, որով
զանազան ազգեր ձեռք բերած են ի-
րենց ազատութիւնը: Հայութիւնն ալ
զգալով իւր բազմադարեան անտար-
բերութիւնն սթափեցաւ վերջապէս
և սկսաւ փարիլ դատարարակութեան
նոր սերունդ մը պատրաստելու հա-
մար. արդարեւ ամէն ջանք ի գործ
դրաւ իւր նիւթական ու բարոյական
ոյժի չափով և յաջողեցաւ տակաւ առ-
տակաւ պարտաճանաչութեան սկզբ-
բունքը և անոր բազմադարեան օգտա-
կարութիւնը ըմբռնելով Հայաստանի
այլ և այլ գաւառներու մէջ դպրոց-
ներ և ընկերութիւններ հաստատել,
որոնց շնորհիւ յեղափոխական ոգին
մուտ գտաւ Հայ սրտերու մէջ: Այս-
պէս Հայ ժողովրդի կեանքը զգալի
փոփոխութիւն մը կրեց վերջին 10
տարիներու ընթացքին մէջ, այնպէս
որ Հարիւրամիայ ծերունին իսկ ցու-
պըն ի ձեռին կանգնեցաւ անխառն,
և պատրաստ էր իւր արեան վերջին
կաթին իսկ նուիրել յօգուտ տառա-
պեալ ազգիս ազատութեան:

Ըստ իմ խոնարհ կարծեաց յե-
ղափոխական շարժումներն դատա-
պարտելու չենք երբէք, նկատելով որ
այսօր անոնց շնորհիւն է որ Հայկա-
կան հարցը Եւրոպայի դիւանագի-
տան դահլիճներու առջև պարզուած՝
Արեւելեան ինքնորոշ ցանկին գլուխը
զրուած զուգնթաց կը քայլէ: Մակե-
դոնական խնդրոյ հետ: Ահա այդ
շարժումներն էին որ քաղաքակիրթ
ազգերու ծանօթացուցին Հայուն ա-
զատասիրութեան ոգին և անոր ար-
ժանիքը, հետեւապէս այսօր ընդհ.՝
մարդկութիւնը վճառար կը խոստո-

«Մարտ» և «Նոր Կեսանք» երկու

Հունիսին ներկայացնող անդամներու վրայ է) միանալով Դաշնակցութեան փոքրիկ ուժը փնտրելու, աւելի լաւ կը լինի այդպիսիներէ հեռի մնալ և առանձին գործել: Ուրեմն իրաւունք չունի:

— Լուստոնի Անկլեարմենական կօմիտէն երեք անտուկ հազուստ զրկած է տեղը, դժբաղդ կրեալներու և հայերու բախուելու համար: Հազուստները թէ և տեղա հասած են, բայց դեռ մարտին մէջ կը գտնուին:

Կրեալացի գաղթականները իրենց տնոցը վերադարձած ըլլալով Կառավարութիւնը որոշած է երկու անտուկ հազուստները նախա զրկել և Բրէնս Եորիկի մէջոցաւ բաշխել տալ, իսկ մէկ անտուկը Աթէնքի և Պիթէօնի կաթու հայերուն պիտի բաշխէ:

— Բաթիդէն փետր. 15 թուականաւ կը ծախուցանեն հեռագրական համադրային գործակալութեան վերադասուէչ պ. Ռիւթէրի մահը:

— Գերմանիոյ Դուիէլմու Կայսրը ի մօտոյ կողմէրէ յիստալիա անձնապատճառներով:

— Էթէմ փաշա՝ եւրոպական թուրքիոյ սահմանի մէջ գտնուած թուրք զորաբանակաց ընդհանուր հրամանատար կարգուած է:

— Յոյն բարերար պ. Սինկուս, փետր. 14ին վախճանելով իւր բոլոր օտապուածքը գրեթէ Յունաստանի, Կ. պոլսոյ և Քիոսի ազգային հաստատութեանց կտակած է: Թաղման հանդէսը արտակարգ չքեղութեամբ տեղի ունեցաւ: Տիկին Սինկուսի հասած ցաւակցական անհամար հեռագիրներու մէջ կ'ը գտնուէր նաև Ապոլոն համալսարանի հեռագիրը:

— Աթէնքի թուրք Ինսպանատան նախկին զինուորական կցորդ Շէյ-ֆուլլա պէյը՝ որ յոյն և թրքական պատերազմի մէջ խաղացած յաջող զերերուն համար Փաշայութեան աստիճանի բարձրացած Յունաստանի սահմանը կը գտնուէր, վերջերս Բ. Դրան հրամանով Պուլկարիոյ սահմանապարտը մեկնած է:

— Փետրվարի սկիզբէն մինչև օրս, թուրք կառավարութիւնը թուրք և պուլկարական սահմանապարտը 800.000 զօրք և մեծ բանակութեամբ ազամայները պատրաստած է. այնպէս որ առաջին հրամանին կարող են շարժուի վիճակի մէջ գնել իրենց ուժերը:

ԲԱՆԱՍԵՐ

ՀԱՆԴԵՍ ՀԱՆՈՍՈՒԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ, ԼԵՋՈՒԱԲԱՆԱԿԱՆ և ՔՆԱԿԱՆ,

որ պիտի հրատարակուի ի Պարիս յառաջիկայ Մարտ ամսոյ վերջը, ՏԵՐՈՐԻՆՈՒԹԵԱՄԲԿ. Գ. ԲԱՍՄԱՋԵԱՆԻ Եւ աշխատակցութեամբ ազգային և օտար արեւելագիտաց:

Բացուած է բաժանորդագրութիւնը՝ Տարեկան չորս գրքի համար 20 ֆր. ամէն տեղ. իսկ իւրաքանչիւր գիրքն՝ առ նուազն 100 էջէ բաղկացեալ՝ կ'արժէ ֆրանք 6:

Դիմել մեր հասցէին, որ է՝ Basmadjian — 112, Bd. Rochechoart, PARIS

Ինչպէս անունէն յայտնի է, ԲԱՆԱՍԵՐ պիտի խօսի գուտ Բանասիրական նիւթոց վրայ. — Պիտի հրատարակէ մեր ազգային հնախօսութեան, պատմութեան և մատենագրութեան վերաբերեալ հետազոտութիւններ:

Պիտի տայ թարգմանութիւններ ու քաղաւածներ հայկական, ասորական, պարսկական, չոչական և բեռական, պարսկական, չոչական և բեռական մասերէն՝ որ մեր ազգին և երկրին նկատմամբ տեղեկութիւններ կամ թէ ակնարկութիւններ կան: Պիտի ըզբաղի բնիկ պատմական խնդիրներով, հետազոտելով մեր նախնիաց և օտար մատենագրութիւնները: Պիտի քննէ մեր մատենագրաց բնագիրներն և այլ և այլ հայերէն ձեռագիրներ: Պիտի հրատարակէ լեզուաբանական և ըստուգաբանական նիւթոց վրայ ուսումնասիրութիւններ:

Աստուծոյ զատ՝ ԲԱՆԱՍԵՐ տեղեկութիւններ պիտի տայ նաև արեւմտեան Եւրոպոյ գլխաւոր մատենագրութեան մէջ պահուած հայերէն ձեռագրաց մասին, հրատարակելով անոնց կատարեալ ցուցակներն ալ:

Նոյնպէս և սկիզբէն պիտի գնէ հրատարակութեան մեր հիմուտ աշխատակցին Կեր. Սուքիաս վ. Պարոնեանի այն ընդարձակ և կարեւոր գործին՝ որուն պատրաստութեան կ'աշխատի քսան տարիէ ի վեր. այս գործն է՝ Մատենացանկ մը Եւրոպական և ասիական օտար լեզուներով միայն ցարդ հրատարակուած ամէն տեսակ գրքերու, յօդուածներու և նմանեաց, որ կը խօսին մասնաւորապէս և անցողաբար Հայոց վրայ, — զանց չընելով տալ նաև անոնց համառոտ ամփոփումն և կամ հատուածիկը:

ԲԱՆԱՍԵՐ պիտի քննէ ևս այն ամէն բանասիրական նոր հրատարակութիւնները՝ որ կը զրկուին հանգիստ տնօրինութեան:

Պէտք է յաւելուի նաև՝ թէ ԲԱՆԱՍԵՐ առ այժմ պիտի հրատարակուի վիմագրութեամբ միայն, քանի որ այս տեսակ գուտ մատենագիտական թերթ մը տակաւին չի կրնար պահել ազգին ընդհանրութիւնն, այլ գիտականութեամբ միայն: Սակայն և այնպէս՝ կը յուսանք զիտնականներէ, որ նիւթին օգտակարութեանը նայելով՝ ջանան բաժանորդներ գտնել և ապահովելու ռուսումնասիրութիւն յարատուութիւնն, որով կարող ըլլանք ապագային մէջ տպագրականին դարձունել անոր հրատարակութիւնը:

Տնօրէնութիւն ԲԱՆԱՍԵՐԻ

ՄԻՈՒԹԻՒՆԻ ՄԻՋՈՑԱԻ ՓՆՏՈՒՄՍ ՀԱՍՑԵՆԵՐ

1898 Յունուար — Յունիս ի մէջ Տիվրիկի նախաւոր գիւղէն Մինաս Բօշեան 28 տարեկան միջակասակ չիկաղէմ, սակաւապին, նախկին հնչակեան երկտասարդը՝ որ ի Կ. Պոլիս Անտոն Ազարեանի տունը կը կը ծառայէր. կը տարածայնութիւն Պաթուի կողմերը ապանուած է, որու մասին իւր ընտանիքը մի որոշ տեղեկութիւն չունենալուն համար, կը խնդրէ ազգայիններէն որ այդ անձի վրայ ունեցած տեղեկութիւններն հաճին Միութիւնի խմբագրութեան հաղորդել:

Կը փնտաւի Սեբաստիայ Լիւսանը գիւղէն Յովհաննէս Արմաղանեան տունն երկտասարդը, որ Պանքայի ցոյցէն ի վեր անյայտ եղած է, զինքը ճանչցողներէն կամ ո'ւր ըլլալը զիտցողներէն կը խնդրուի որ հաճին իմաց տալ Միութիւնի խմբագրութեան:

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

ԱՆԱՀԻՏ

ՀԱՆԴԵՍ ԱՄՍԵԱՅ

Ազգային, Գրական և Գեղարուեստական

Հասցէ՝

Mr. A. Tchobanian 6 place de l'Odéon. PARIS

ԲԱՋՄԱՎԵՊ

ԲԱՋՄԱՎԵՊԻՆ՝ կը հրատարակուի ամեն ամսոյ սկիզբը՝ կը պարունակէ ռուսումնական հին նորակազ բառերու ստուգաբանութիւն, հետաքրքրական ազգային տեղեկութիւնք. նըմանապէս պատմական, ռուսումնական, կինսպարական, բարոյական և իմաստասիրական և այլն յօդուածներ:

Հասցէ՝

RÉDACTION DE LA REVUE "PAZ-MAVEP,"

S.t Lazar VENISE (Italie)

«ՀԱՆԴԵՍ ԱՄՍՈՐԵԱՅ»

ՈՒՍՈՒՄՆԱԹԻՐՈՒ

Կը հրատարակուի ամէն ամսոյ սկիզբը:

Հայ — Գրական յօդուածներէն զատ՝ ճշդի տեղեկութիւն կը տրուի Հայ — գրականութեան, պատմութեան և այլն նկատմամբ ամէն ամիս ելած հրատարակութեանց վրայ: Նոյնպէս քննադատական տեղեկութիւն կը տրուի ազգային լրագրաց մէջ տրուած կարեւոր լրերու մէջ:

Հասցէ՝

A la Rédaction de la Revue „Hattesse“, Vienne (Autriche) VII/2 Me chitharistengasse 4.

ՀԱՅԿԱԿԱՆ ԶԻՆԱՆՇԱՆ

Գունաւոր և մեծադիր. գինն է 2 ֆր. փոստի ծախքով: Դիմել խմբագրութեան կամ արտասահմանի մեր պ. պ. գործակալատներուն: Ամերիկայեան ազգային կրնան դիմել ռազդակի հետեւեալ հասցէին՝

Mr. Dades Zakar a Sere et Co. Providence. U, S A.

Գ. ՏԱՐԻ

Բացուած է բաժանորդագրութիւն

ՀԱՅԵԼԻ

Ազգային և Զանչտական

Շարախականդէսի

Տարեկան բաժնեգինն է 12 ֆր. վեցամսեայ 6 ֆր. կանխիկ.

Հասցէ՝

Diran Papazian Rue Dragoman, K Stepan Varna (Bulgarie)

Օ Ր Ա Ց Ո Ց Յ

1899 Տարուան

Լոյս տեսաւ Տէր Ղեոնդ քահանայ Փափագեանի Հայերէն-Ռուսական լրագրաց ճիւղ պարունակութեամբ, պատկերազարդ և ընտիր թղթով տպագրուած:

Գինն է՝ թղթակազմին 1 ֆր. լաթակազմին 1 1/2 ռուկեզօթին 2: Դիմել հեղինակի հետեւեալ հասցէին՝

R. P. Leon Papazian Eglise Arménienne. Galatz (Roumanie)

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԲԱՌԴԻՐԻ ԳԱՂ.

ԵՒ ՀԱՅ

ԳՈՐԾԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԵԱՆՑ

Ի. Հ. ՍԻՄԵՆՆԵ ԵՐԵՄԵԱՆ

Աշխարհիկ լեզուով՝ ընդարձակ բացատրութիւններ կուտայ ընդհանուր գիտական և բժշկական իրաց և այլ կարեւոր նիւթոց վրայ էջերով օգտակար տեղեկութիւնք անպակաս են: Սոյն գործոյն բաժանորդագրութիւնը, որ է 10 ֆրանք, կը տեղ մինչև մարտ ամսոյն սկիզբն. յետոյ գինը 15 ֆրանքի կը բարձրանայ: Մինչև ցարդ բաժանորդագրութիւնք հասած են 150ի:

Դիմել իւր հասցէին

Direction de l'Imprimerie arménienne St. LAZAR VENISE

Պ. Գ. Տէօքմէճեան հրատարակած է հետեւեալ մեծադիր (21—27) լուսանկար պատկերներն որոնք ընտիր քարտօնի (33—39) վրայ փակցուած կը ծախուին հատր ֆր. 2,50ի՝ ամեն տեղի համար և փոստի ծախքով միասին:

Ազգային հաստատութիւններու եւ մեծաքանակ գնողներու համար գոհացուցիչ զեղը:

Վճարմունք կանխիկ:

1. Նշանակը Հայաստանեայց
2. Որիմեան Հայրիկ
3. Իշմիրեան Պատրիարք
4. Ներսէս Պատրիարք
5. Բաֆֆի
6. Քամառ Քաթիպայ
7. Գ. Արծրունի

Դիմել՝ K. Deukmédjian Roustchouk (Bulgarie)

ՆՈՒԱԳՆԵՐ

Ա. ԱՍՄԱՆԻ

Դինն է 10 կոպէկ: Եւրոպայի համար — 25 — սանթիմ. գումարով գնողներին 10 օ/օ զեղը կը լինի: Դիմել՝ Միութիւնի խմբագրութեան և հեղինակի հետեւեալ հասցէին:

A. ASMAN. TAURIS — PERSE Poste Restante.

ՊԱՏՐԱՍ ԵՆ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ Ա. ԱՍՄԱՆԻ

I «ՀԱՅԻՈՒԿ» պօժման

II «ՀԱՅԻ» ժամանակակից վէպը

Երկուսի նիւթն էլ առնուած է Վասպուրականի վերջին դէպքերից և իւրաքանչիւրը բաղկացած է 32 հրետներէ:

Դրանց տպագրութեան ծախքը հոգալ կամեցողները թո՛ղ բարեհաճին իրենց պայմանները գրել հեղինակին վերի հասցէին:

ՎՐԻՊԱԿ

Մեր նախնիաց թուի՝ պ. Ճանկիւլեանի ԴԻՄԱԿԱՌՆԵՐԸ և Մարտականներու Վարչութիւնը՝ վերադարձով հրատարակութեան մէջ, Յրդ էջին Ա. սիւնակի 37րդ տողին մէջ գիտագրերով գրուած. «հետեւապէս ի մօտոյ ևս աւելի ընդարձակ մի հրատարակութեամբ բառերը պէտք է կարգաւ «անգամ մը ևս աւելի ընդարձակ միջոցներով»:

ԽՄԲԱԳ. «ՄԻՈՒԹԻՒՆ»

ԱԹԵՆԻ ՀԱՅԿ. ԱԶԱՏ ՏՊԱՐԱՆ